ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
GYUMRI "YOUTH INITIATIVE CENTRE" NGO

Մարտի 21, 2024
№ Ե049-03/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ
ՏԻԿԻՆ Լ. ՍԱՆՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Սանոյան,

համաձայն N 02116095 «18» մարտի 2024թ. գրության՝ կից (Հավելված 1) Ձեզ ենք ներկայացնում «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի գործարկման ծախսերի նախահաշիվը՝ 2024թ. մայիսի 1 - դեկտեմբերի 31 ժամանակահատվածի համար:

Առդիր՝ 1 (մեկ) էջ:

Հարգանքով՝
Արթուր Նաջարյան
ԵՆԿ ՀԿ նախագահ

ՀԿ ԳՅՈՒՄՐՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ
ОБЩЕСТВЕННАЯ ОРГАНИЗАЦИЯ "ЦЕНТР МОЛОДЕЖНЫХ ИНИЦИАТИВ" ГЮМРИ
YOUTH INITIATIVE CENTRE" NON-GOVERNMENTAL ORGANIZATION OF GYUMRI
05536501

Կատարող՝ Լ. Հակոբյան
ԵՆԿ ՀԿ ֆինանսների պատասխանատու
/հեռ. 099426689/

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 21 03 2024 Թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 5436

Ալեք Մանուկյան 26, Գյումրի 3108, Հայաստան
26 Alek Manukyan, Gyumri 3108, Armenia
+374 95 91 91 97
yic@yic.am
www.yic.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի
2024թ. մայիսի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի գործարկման (500 շահառուի համար)

Բ/տ	Ծախսի նկարագրություն	Միավոր	Միավորի քանակ	Միավորի գին	Ընդամենը	Համայնքապետարանի ներդրում	ԵՆԿ ներդրում
1	**Մարդկային ռեսուրսներ**						
1.1	Կենտրոնի համակարգող / 100%	Ամիս	8	162,400	1,299,200	1,299,200	-
1.2	Երիտասարդական աշխատող /2 անձ* 100%	Ամիս/անձ	16	118,750	1,900,000	1,900,000	-
1.3	Հավաքարար / 30%	Ամիս	8	45,000	360,000	360,000	-
				Ընդամենը 1	**3,559,200**	**3,559,200**	**-**
2	**Ընթացիկ գործունեության ծախսեր**						
2.1	Կոմունալ վճար (գազ, էլ. Էներգիա, ջուր)	Ամիս	8	23,000	184,000	184,000	-
2.2	Հեռահաղորդակցում (Ինտերնետ, հեռախոս)	Ամիս	8	12,800	102,400	102,400	-
2.3	Գրենական և ընթացիկ գործունեության պարագաներ/նյութեր	Ամիս	8	6,000	48,000	48,000	-
2.4	Ծայրամասային թաղամասերում շարժական երիտասարդական աշխատանքի տրանսպորտային ծախսեր	Ամիս	8	4,000	32,000	32,000	-
2.5	Ընթացիկ պահպանման ծախսեր	Տարի	1	50,000	50,000	50,000	-
2.6	Ցերեկային բակային ճամբար	անգամ	1	300,000	300,000	300,000	-
2.7	Թեմատիկ աշխատարաններ, դասընթացներ, մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, խորհրդատվություններ, ուսումնական և ճանաչողական այցեր	Միանվագ	1	1,700,000	1,700,000	-	1,700,000
				Ընդամենը 2	**2,416,400**	**716,400**	**1,700,000**
3	**Բաց երիտասարդական կենտրոնի մոդելի ներդնում, գործարկում, աշխատանքների կազմակերպում և մոնիթորինգի/գնահատման իրականացում**						
3.1	Կենտրոնների ծրագրի պատասխանատու /20%	Ամիս	8	96,000	768,000	-	768,000
3.2	Մոնիթորինգի և որակի պատասխանատու / 15%	Ամիս	8	117,000	936,000	-	936,000
3.3	Հաշվապահ / 5%	Ամիս	8	21,000	168,000	-	168,000
3.4	Մեթոդական խորհրդատվություն, տվյալների հավաքագրում-վերլուծություն, բազաների պատրաստում, վերապատրաստումների անցկացում	Ժամ	130	3,750	487,500	-	487,500
3.5	Մասնագիտական վերապատրաստումներ (տեղական և միջազգային)	Միանվագ	1	540,000	540,000	-	540,000
3.6	Գործուղման ծախսեր	Տարի	1	140,000	140,000	-	140,000
				3	**3,039,500**	-	**3,039,500**
				ԸՆԴԱՄԵՆԸ 1 - 3	**9,015,100**	**4,275,600**	**4,739,500**

ԳՅՈՒՄՐՈՒ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
GYUMRI "YOUTH INITIATIVE CENTRE" NGO

№ Ե030-02/24
26 փետրվարի 2024թ.

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇ... Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 26.02 2024 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 3846

«ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԿ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ՆԱՋԱՐՅԱՆԻՑ
055858307, 095919197

ԴԻՄՈՒՄ

Հարգելի՛ պարոն Սամսոնյան,

Հաշվի առնելով Գյումրու համայնքապետարանի և «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ԵՆԿ ՀԿ) միջև երկարատև և վստահելի համագործակցության արդյունավետությունն ու «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) ծառայությունների կարևորությունը Գյումրիում սակավ հնարավորություններով պատանիների և երիտասարդների ոչ-ֆորմալ կրթության և զարգացման գործում՝ Ձեզ ենք դիմում Կենտրոնի շարունակական գործունեության ապահովման խնդրանքով:

Բաց երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող Հայաստանում առաջին բաց երիտասարդական կենտրոնը ստեղծվել է 2018 թվականին ԵՆԿ ՀԿ-ի և Գյումրու համայնքապետարանի կողմից՝ Եվրոպական միության աջակցությամբ: Կենտրոնի ստեղծման համար Գյումրու համայնքապետարանը տրամադրել է 93 քմ տարածք, որի կառուցապատումն և վերանորոգումն իրականացրել է ԵՆԿ ՀԿ-ն (գույքի անհատույց օգտագործման N1718 պայմանագիր, կնքված 2017 թվականի դեկտեմբերի 25-ին):

Կենտրոնի նպատակն է՝ բարձրացնել Գյումրիում 13-ից 18 տարեկան պատանիների և երիտասարդների բարեկեցությունը, քաղաքացիական ակտիվությունն ու զարգացնել սոցիալական հմտությունները՝ պրոֆեսիոնալ երիտասարդական աշխատանքի իրականացման և հասանելի երիտասարդական ծառայությունների տրամադրման միջոցով:

Կենտրոնը պատանիների և երիտասարդների համար կրթվելու, սոցիալական հմտություններ զարգացնելու, ինքնաարտահայտվելու, ազատ ժամանակը կազմակերպելու և հասակակիցների հետ շփվելու ապահով տարածք է, նպաստող միջավայր՝ իրենց սոցիալականացման և համայնքում դրական փոփոխությունների իրականացման համար:

Կենտրոնը ծառայություններ է մատուցում տարեկան 600-ից 700 պատանիների և երիտասարդների, այդ թվում՝ սոցիալապես անապահով, սակավ հնարավորություններով, ինչպես նաև Արցախից տեղահանված:

Կենտրոնի **գործունեության հիմնական ուղղություններն են՝**

- քաղաքացիական կրթություն,
- կյանքի հիմնարար հմտություններ,
- մասնագիտական կողմնորոշում,
- առողջ ապրելակերպի խթանում,
- առաջնորդություն և նախաձեռնողականություն,
- բովանդակալից ժամանցի կազմակերպում:

Կենտրոնների կողմից տրամադրվող **ծառայություններն են՝**

- կրթական ակումբներ, աշխատարաններ և դասընթացներ,
- տեղեկատվություն և խորհրդատվություն,
- ուսումնաճանաչողական այցեր,
- էքսկուրսիաներ, արշավներ և ճամբարներ,
- ժամանցային և հանրային միջոցառումներ,
- անհատական կամ խմբային երիտասարդական աշխատանք,
- շարժական երիտասարդական աշխատանք,
- միջազգային փոխանակման ծրագրեր:

Հարկ է նշել, որ 2018 թվականից ԵՆԿ ՀԿ-ն ամբողջապես ստանձնել է՝

- Կենտրոնի վերանորոգման, կահավորման, նյութատեխնիկական հագեցման, հարմարեցման և կենտրոնի գործարկման հետ կապված աշխատանքների կազմակերպումը և համակարգումը,
- Կենտրոնի համակարգողի, երկու երիտասարդական աշխատողի (մասնագետների) և ընդունարանի աշխատակցի հավաքագրումն ու վերապատրաստումը,
- Կենտրոնի գործառնական փաստաթղթերի (Կենտրոնի գործառնական մոդելը և աշխատանքային կանոնակարգերը՝ համապատասխան հավելվածներով, աշխատողների վարքագծի կանոնները, ապահովության և անվտանգության պլանը, տվյալների հավաքագրման համակարգը և ձևաթղթերը) մշակումը,
- Կենտրոնի գործունեության ադյունավետության ապահովման համար մոնիթորինգի և գնահատման իրականացումը:

Կենտրոնի գործունեության շարունակականությունն ապահովելու համար 2019 թվականի հունիսի 28-ին Գյումրու համայնքապետարանի և ԵՆԿ ՀԿ-ի միջև կնքվել է փոխհամագործակցության հուշագիր, համաձայն որի՝ 2020, 2021 և 2022 թվականներին Կենտրոնին հատկացվել է տարեկան 600.000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամի չափով դրամական աջակցություն՝ պահպանման ամենամյա ծախսերը (կոմունալ վճարներ և ընթացիկ այլ ծախսեր) հոգալու համար:

Գյումրու համայնքապետարանի և ԵՆԿ ՀԿ-ի միջև համագործակցության մոդելը, որպես համայնքապետարան-հասարակական կազմակերպություն համագործակցության հաջողված ձևաչափ, 2019 թվականին բարձր է գնահատվել նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներկայացուցիչների կողմից և օրինակ է հանդիսացել այլ համայնքներում նմանատիպ համագործակցությունների հաստատման համար:

Արդյունքում, այս մոդելի հինման վրա 2020 թվականին Սպիտակում, 2022 թվականին՝ Գավառում, Էջմիածնում և Արմավիրում, իսկ 2023 թվականին Արթիկում ստեղծվեցին «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնները՝ Յունիսեֆի հայաստանյան գրասենյակի և համապատասխան համայնքապետարանների հետ համագործակցությամբ, որտեղ համայնքապետարաններն ամբողջապես ստանձնել են կենտրոնների կողմից համայնքային երիտասարդական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տարեկան ծախսերը՝ կոմունալ, ընթացիկ գործունեության նյութատեխնիկական և տրանսպորտային միջոցների, մարդկային ռեսուրսների (կենտրոնի համակարգող, երիտասարդության հարցերով երկու մասնագետ՝ երիտասարդական աշխատող, և հավաքարար), մոնիթորինգի անցկացման և որակի ապահովման:

Հարգելի՛ պարոն Սամսոնյան,

Կարևորելով համայնքապետարանի ներգրավվածությունը «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի անխափան և շարունակական գործունեություն ծավալելու հարցում և հիմք ընդունելով 2019 թվականի հունիսի 28-ին կենտրոնի գործունեության շարունակականությունն ապահովելու համար Գյումրու համայնքապետարանի և ԵՆԿ ՀԿ-ի միջև կնքված փոխհամագործակցության հուշագիրը՝ դիմում ենք Ձեզ Կենտրոնի գործարկումը նոր ձևաչափով՝ համայնքապետարան-հասարակական կազմակերպություն համատեղ իրականացնելու խնդրանքով:

Ակնկալվում է փոխհամագործակցության հուշագրին կից ստորագրել երկկողմ համաձայնագիր, որի համաձայն՝ 2024 թվականի մարտի 1-ից Կենտրոնի կողմից համայնքային երիտասարդական ծառայություններն արդյունավետ ու նպատակային իրականացնելու համար **համայնքապետարանը** կհոգա տարեկան կտրվածքով հետևյալ ծախսերը՝

- Կենտրոնի գործարկման և ընթացիկ պահպանման ծախսեր (այդ թվում նաև գրենական և ընթացիկ գործունեության համար անհրաժեշտ պարագաներ)՝ **142.000 ՀՀ դրամ**,
- մարդկային ռեսուրսների հետ կապված ծախսեր՝ (կենտրոնի համակարգողի, երկու երիտասարդական աշխատողի և հավաքարարի աշխատավարձ) **5.338.800 ՀՀ դրամ**,

- ծայրամասային թաղամասերում շարժական երիտասարդական աշխատանքի իրականացման համար անհրաժեշտ տրանսպորտային ծախսեր՝ **48.000 ՀՀ դրամ**,
- կոմունալ ծախսեր՝ **276.000 ՀՀ դրամ**,
- հեռահաղորդակցման (համացանց, հեռախոս) ծախսեր՝ **153.600 ՀՀ դրամ**,
- ցերեկային բակային ճամբարի ծախսեր՝ **300.000 ՀՀ դրամ**:

Տարեկան ընդամենը **6.258.400 ՀՀ դրամ** (վեց միլիոն, հարյուր ութսուներկու հազար չորս հարյուր) ներդնելու արդյունքում, կապահովվի երիտասարդական որակյալ ծառայությունների տրամադրում համայնքում 600-ից 700 պատանիների և երիտասարդների, այդ թվում՝ սոցիալապես անապահով, սակավ հնարավորություններով, ինչպես նաև Արցախից տեղահանված և այլ խոցելի խմբերի:

Իր հերթին, **ԵՆԿ ՀԿ-ն** կհոգա հետևյալ ծախսերը՝

- թեմատիկ աշխատարանների, դասընթացների, մասնագիտական կողմնորոշման հանդիպումների, խորհրդատվությունների, ուսումնական և ճանաչողական այցերի համար անհրաժեշտ ծախսերը՝ **2.500.000 ՀՀ դրամ**,
- Բաց երիտասարդական կենտրոնի մոդելի ներդրման, գործարկման աշխատանքների կազմակերպման, մոնիթորինգի ու գնահատման իրականացման համար անհրաժեշտ ծախսերը՝ **4.398.000 ՀՀ դրամ**:

Տարեկան ընդամենը՝ **6.898.000 ՀՀ դրամ** (վեց միլիոն, ութ հարյուր իննսունութ հազար):

Դիմումին կից ներկայացվում է տարեկան գործարկման նախահաշիվը:

Մեզ համար անչափ կարևոր և գնահատելի է Գյումրու համայնքապետարանի աջակցությունը «Գյումրու երիտասարդների տան» ծառայությունների որակյալ շարունակականությունը և հասանելիությունը ապահովելու գործում:

Լիահույս ենք, որ համագործակցությունը ընդլայնելու հնարավորություն կլինի՝ ի շահ համայնքի պատանիների և երիտասարդների զարգացման:

Հարցերի դեպքում, սիրով պատրաստ ենք քննարկել:

Հարգանքով՝

Արթուր Նաջարյան
ԵՆԿ ՀԿ Խորհրդի նախագահ

«Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնի
տարեկան գործարկման ծախսերի նախահաշիվ (700 շահառուի համար)

Բ/տ	Ծախսի նկարագրություն	Միավոր	Միավորի քանակ	Միավորի գին	Ընդամենը	Համայնքապետարանի ներդրում	ԵՆԿ ներդրում
1	**Մարդկային ռեսուրսներ**						
1.1	Կենտրոնի համակարգող / 100%	Ամիս	12	162,400	1,948,800	1,948,800	-
1.2	Երիտասարդական աշխատող /2 անձ* 100%	Ամիս/անձ	24	118,750	2,850,000	2,850,000	-
1.3	Հավաքարար / 30%	Ամիս	12	45,000	540,000	540,000	-
				Ընդամենը 1	**5,338,800**	**5,338,800**	**-**
2	**Ընթացիկ գործունեության ծախսեր**						
2.1	Կոմունալ վճար (գազ, էլ. էներգիա, ջուր)	Ամիս	12	23,000	276,000	276,000	-
2.2	Հեռահաղորդակցում (Ինտերնետ, հեռախոս)	Ամիս	12	12,800	153,600	153,600	-
2.3	Գրենական և ընթացիկ գործունեության պարագաներ/նյութեր	Ամիս	12	6,000	72,000	72,000	-
2.4	Ծայրամասային թաղամասերում շարժական երիտասարդական աշխատանքի տրանսպորտային ծախսեր	Ամիս	12	4,000	48,000	48,000	-
2.5	Ընթացիկ պահպանման ծախսեր	Տարի	1	70,000	70,000	70,000	-
2.6	Ցերեկային բակային ճամբար	անգամ	1	300,000	300,000	300,000	-
2.7	Թեմատիկ աշխատարաններ, դասընթացներ, մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, խորհրդատվություններ, ուսումնական և ճանաչողական այցեր	Միանվագ	1	2,500,000	2,500,000	-	2,500,000
				Ընդամենը 2	**3,419,600**	**919,600**	**2,500,000**
3	**Բաց երիտասարդական կենտրոնի մոդելի ներդնում, գործարկում, աշխատանքների կազմակերպում և մոնիթորինգի/գնահատման իրականացում**						
3.1	Կենտրոնների ծրագրի պատասխանատու /20%	Ամիս	12	96,000	1,152,000	-	1,152,000
3.2	Մոնիթորինգի և որակի պատասխանատու / 15%	Ամիս	12	117,000	1,404,000	-	1,404,000
3.3	Հաշվապահ / 5%	Ամիս	12	21,000	252,000	-	252,000
3.4	Մեթոդական խորհրդատվություն, տվյալների հավաքագրում-վերլուծություն, բազաների պատրաստում, վերապատրաստումների անցկացում	Ժամ	200	3,750	750,000	-	750,000
3.5	Մասնագիտական վերապատրաստումներ (տեղական և միջազգային)	Միանվագ	1	670,000	670,000	-	670,000
3.6	Գործուղման ծախսեր	Տարի	1	170,000	170,000	-	170,000
				3	**4,398,000**	**-**	**4,398,000**
				ԸՆԴԱՄԵՆԸ 1 - 3	**13,156,400**	**6,258,400**	**6,898,000**